ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՅՒՂ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամերիկայի համար եռամսեայ 1 ոսկւոր թղթդրմ.
Եւրոպայի և այլ տեղերի համար » 5 ֆրանգ
» » » » ամսական » 2 սանդիմ
Հատով կը ծախուի 20 սանդիմ
Տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։
Բաժնորդագրութիւնները կը սկսին ամսագլուխներէն (Ն. Տ.)։
Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia* MARSEILLE (France)

Գ ՏԱՐԻ ԹԻԻ 91

1888 ՕՒԼԻՍ 7
ՅՈՒՆԻՍ 25 (Հ. Տ.)

ԳԱՓԱՂ

Կը հրատարակուի Դշ. և Շբթ. օրեր

ՊԱՏՄԱՆԵՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կընհրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձունել չհրատարակուած ձեռագիրները։
Յանուցմներ կընդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues au bureau de la Rédaction (Rue Vacon, 50)

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ "ԱՐՄԷՆԻԱ,, Ի ԳՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ ՀԱՄԱՐ

(1888 ՕԳՈՍՏՈՍ—89 ՕՒԼԻՍ)

Բաժնորդ գրուողի կամքին թողուած է որոշել իւր բաժնորդագին, պայմանով որ յետագայ գլուխներէն պակաս չլինի.

Ամերիկայի համար տարեկան մինչեւ 2 ոսկւոր թղթադրամ.

Պարսկաստանի համար տարեկան մինչեւ 4 թուրլի թղթդրմ.

Եւրոպայի և այլ տեղերի համար տարեկան մինչեւ 10 ֆրանգ.

Վեցամսեայ և եռամսեայ բաժնորդագրութիւնները ալ կընդունուին առանց սակէ յաւելում անելու, այսինքն վեցամսեայն մինչեւ 5 ֆրանգ և եռամսեայն մինչեւ 2 ½ ֆրանգ. Նոյն համեմատութեամբ հաշուելով նաեւ Ամերիկայի և Պարսկաստանի համար։

Հատով պիտի ծախուի 10 սանթիմ ամէն տեղ (Ամերիկայի մէջ 2 սենթ)։

Լրագրի տնօրէնութիւնն ինք կը վճարէ փոստի ծախքը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՒՐՔԻԱՅԻ ԵԼՄՏԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Le Sémaphore de Marseille *լրագրին մէջ որ Ֆրանսայի վաճառականական և ելեւմտական ամենանշանաւոր լրագիրներէ մին է, կը կարդանք նշանակութեան արժանի յօդուածներ Թիւրքիոյ Գեաուէթեան ելեւմտական վիճակին վրայ։ Աւելորդ չենք համարիր առանձին մի քանին հետզհետէ թարգմանելով ծանօթացնել մեր ընթերցողներին։*

1876 *յուլիս 26ին, Սուլթան Մուրատ եղբայրն և գահաժառանգ իշխան Աբդիւլ-Համիտ, Օսմանեան գահին վրայ բարձրանալէն վեց շաբաթի չափ յառաջ երբ տակաւին ամէն բոլոր կ'ապահովին Սուլթան Մուրատի գահընկեցութեանն, իւր մտերիմ ծանօթներէ մին ղրկեց անգլիական դեսպան Սըր Հէնրի Էլիոթին մօտ։ Օսմանի գահին հետամուտ իշխանը կուզէր խմնալ Անգլիացի դիւանագիտին իւր նկատմամբ ունեցած տրամադրութիւններն և կը ջանար անոր համակրութիւնն ու օգնութիւնը ձեռք բերելու։ Աբդիւլ-Համիտի մտերիմ բաները որ Հօպարթի փաշա անունով հանրածանօթ անդլիացի բազդախնդիրն էր, երկարօրէն բացատրեց Սըր Էլիոթին թէ իշխանը ինչ ծրագիր ժողովր էր դործադրել երբ կայսերական գահը բարձրանար։ Խոստացաւ բարենորոգութիւններ անել, մարդասիրի և արդարադատ մի վարչութիւն հաստատել նահանգներին մէջ. իսկ ելեւմտական (finances) վիճակին գալով, ըսաւ. «Իշխանը այն կարծիք ունի թէ արմատական բարենորոգում պէտք է մտցունել ելմտական վարչութեան մէջ որպէս զի յիմարական և անօգուտ ծախքերի առջեւն առնուելեմէ պէտք է մի խիստ հսկողութիւն հաստատել ելմտական նախարարութեան մէջ, վերջ տալու համար այն ապականութեան որ կը տիրէ կառավարական այդ բաժնի մէջ։» Այդ խոստովանութիւն անկեղծ էր և Թերեւս ապագայ Սուլթանին խոստումներն ալ անկեղծ էին. բայց հիմա պիտի տեսնենք թէ այդ խոստումներ ո՛րչափ դործադրուած են։*

Անհատական տասեւմէկ և տուրքներ անցած են որ Սուլթան Աբդիւլ-Համիտ կը վարէ մի բացարձակ, անսահման իշխանութիւն որ ո՛չ հանրային կարծիքի ազդեցութենէն ենթարկուած է, ո՛չ ալ «երդեր»ի ազդեցութենէն — ինչպէս այդ կը լինէր Ֆրանսական հին միապետութեան ժամանակ— վասն զի ծանրարարոյ և լուսակաց Փիւրքը քիչ կերազէ և այժմ աւելի քան երբէք արամադրութիւն չունի երազելու։ Սրտ, արդար լինելու համար հարկ է խոստովանիլ թէ Սուլթանը երբ գահը բարձրացաւ, իր առջեւ գտաւ տէրութիւններով և վերատեսներով ծածկուած մի երկիր որ պարտատէրերուն մաքրել, արտահարդ և յանկարծական բարեմիտ պէտքերի դարման տանիլ և առնուազն չարաչար չորս տարի ամէն տեսակ ճիդ թափեց գրեթէ անյաղթելի դժուարութիւնների դէմ որոնք անհնարին լինելու չափ կը դժուարացունէին Տէրութեան ելմտացոյցի հաստատակեցութիւնը։ Այդ բացառիկ դրութեան վերջն եկաւ 1880 թուականին և այդ ժամանակ Մեծ Եպարքոս Սայիտ փաշան ձեռնարկեց մի կանոնաւոր ելմտացոյց (budget) հրատարակել որի մէջ բարի և համեստ մտադրութիւններ յայտնուած էին։

Քանի որ մի ուրիշ ելմտացոյց չկայ մեր առջեւ, 1880-81ի այդ ելմտացոյցի հետեւողութեամբ կուզեմ նշանակել այստեղ այն գլխաւոր ծախքերը որոց մասին պէտք է հոգայ Օսմանեան ելեւմտական նախարարը (ministre des finances)։ Ես ալ Սայիտ փաշայի ելմտացոյցին մէջ նշանակուած կարգովը կը դնեմ այստեղ։

1880-81 *թուականի ելմտացոյցին մէջ, արտաքին պարտքերի վարչութեան համար նշանակուած է 209 միլիոն դրուշ, որ անել է դրեթէ 48 միլիոն ֆրանք։ Այսօր, ինչպէս գիտէ ամէն մարդ, politiquement եղած արտաքին պարտքի վարչութիւնը պահպանուած է արեւելքի տէրերին թողուած եկամուտների հատկութեան որ 40 միլիոն կամ դրեթէ 40 միլիոն ֆրանգի կը հասնի։ Այդ գումար այժմ չնշանակուիր այլ եւս Օսմանեան ելմտացոյցին մէջ։*

Ներքին պարտքը որ կը ներկայացունեն ա.հիմները (Թանձէն արուած մի տեսակ մարքաներ՝ անվճար ձեռացած ամսաթղթակաների հաշուին), երեքուն պարտքը (dette flottante, 500 միլիոն ֆրանքի չափ), 1877ի բանի փոխառութեան տարեկան վճարքը (annuité), Օսմանեան Պանքայի յանձնարարագիրը, նոյն հաստատութեան յատկացած նպաստը, մեսալական դրամին վրայ եղած դիզքի և փոխանակութեան տարբերութիւնները և այլն և այլն, այն ժամանակ տարեկան դրեթէ 65 միլիոն ֆրանգի մի գումար կը պահանջէին։

Վերջապէս անձնական ծախքին (liste

բա այս յաջողութիւն, անուանելով գինք պարսկական լիազօր դեսպան Պերլինի և Լոնտոնի և անկէ ի վեր Վահմ. Իշխանը իւր բնակութիւն հաստատած է Լոնտոն ուր իւր տպաղութիւն, իւր ունեցած եւրոպական բարձրագոյն կրթութեամբ և իւր յանկուցիչ բնաւորութեամբ մի կարեւոր և ազդեցիկ դիրք բռնած է դիւանագիտական աշխարհին մէջ։

Իշխան Մելքոն խանի կեանքի աշխատանքն և պարծանքն եղած է, կըգրէ Revue Diplomatique, հաշտեցնել ասիական հին քաղաքակրթութիւնը եւրոպական նոր գաղափարներին հետ և այդ ձեռնարկի մէջ յաջողելու համար պահանջուած ամեն յատկութիւններն ցոյց տուած է իւր վրայ։ Այս նպատակով 35 տարի անդադար աշխատած, կռուած է նախապաշարումներուն, վնդծութիւնների դէմ և յաջողած է իւր քաղաքակրթիչ ազդեցութիւն բանեցնել, թէ՛ մտքին և թէ՛ հետուքին, Պարսկաստանի ներքին կառավարութեան ամենափոքր և ամենածանր գործերին մէջ անգամ։

Վահմ. Իշխան Մելքոն խան ծնած է Պարսկաստանի Սպահան (Ն. Ջուղա) քաղաքը 1831 (1) թուականին, մի հին և ազնուական Հայ գերդաստանէ որի Պարսկաստանի մէջ հաստատելուն թուականը մինչեւ 3 դար դէպի հնութիւն կը տանի մեզ։ Տասարեան եղած ժամանակ Հայրը գինք ղրկած է Փարիզ ուր իւր հայկական տակուն աշխատասիրութեան և եւրոպական խնամեալ դաստիարակութեան չնորհով մեծ յառաջդիմութիւն ունեցած և իւր բնական ձիրքերը ևս բեւեռ եկած են։

Վահմ. Իշխան Մելքոն խան՝ ոչ միայն ճարտար դիւանագէտ է, այլ և ընտիր գրագէտ։ Նա գրած է ընտիր յօդուածներ արեւելեան գործերուն նկատմամբ Փարիզի Revue des Deux-Mondes անուանի ամսագրին և Լոնտոնի Times ին մէջ. ունի նաեւ պարսկերէն լեզուով հեղինակութիւններ։ Իւր ամեն կենսագրողները կը խոստովանին թէ Վահմ. Իշխանի գրածներին մէջ հատատարապէս կը փայլին թէ՛ իւր բազմազան հմտութիւն և թէ՛ իւր գրականական նուրբ ճաշակ։

Եթէ մեզ համար պարծանք է որ եւրոպական լրագիրներ այնչափ գովեստներով կը խօսին մի հայազգի Իշխանի վրայ, մեզ աւելի ուրախացնողն այն է որ Վահմ. Իշխան Մելքոն խան իւր փառքի մէջ, մի օտար կայսրութեան ամենադարձր պաշտօններին արժանացած ժամանակ իսկ չմոռնար թէ ինք Հայ է, կը սիրէ իւր ազգ և հանդամանքների ներածին չափ չը խնայեր իւր աջակցութիւն իւր սիրելի ազգի։ Այս պատճառով, հայրենասէր հանդուցեալ ներբէս պատրիարքն ալ չատ համարում և յարգանք կը տածէր Իշխանին վրայ։ Արդէն Մելքոն խան իւր նախնական կրթութիւն սատացած է մայրենի հայ լեզուով որին լաւ ծանօթ է այժմ, ինչպէս նաեւ հայ հոգեւոր։ Աւելցնենք նաեւ թէ Վահմ. Իշխան Մելքոն խան ամուսնական կապով կապուած է Կ. Պոլսի Տատեան գերդաստանին հետ որ ինչպէս Օսմանեան կայսրութեան պաշտօններին մէջ վայելած բարձր դիրքովը, նոյնպէս և իւր ազգասիրական և կրօնասիրական ղղացումներով անուանի է արդէն Հայ ազգին մէջ։

Մ. փ.

(1) Revue Diplomatiqueի մէջ արձագրական սխալմամբ գրուած է ծննդեան թուականը. ուստի ուրիշ հրատարակութիւնների դիմելով կը ճշդենք այստեղ այդ թուական։

ՀԱՑԵՐ Ի ԹԻՒՐԲԻԱ

Ամեն. Ցարութիւն պատրիարքի հրաժարականի ընդունելուն պաշտօնագիրը, յունիս 16/28 հինգշաբթի երեկոյին, Դատական և կրօնական գործերի նախարարութեան պաշտօնեայ մը ղրկուած է մեր Ազգային Պատրիարքարան։ Այդ պաշտօնագրի մէջ ըսուած է որ Սուլթանը ընդունելով Ցարութիւն Սրբազանի հրաժարականն Կ. Պոլսի պատրիարքութենէն, վաւերացուցած է նորա Երուսաղէմի պատրիարք ընտրուիլն և հրամայած է որ Կ. Պոլսի պատրիարքական աթոռին համար մի Տեղապահ ընտրուի Սահմանադրութեան համաձայն։

Խառն ժողովը այս երկուշաբթի օր (յունիս 20/2 յուլիս) դումարուած կը լինի Տեղապահն ընտրութեանն համար։

—Հրաժարեալ պատրիարք Ցարութիւն Սրբազան՝ թէ՛ Մեծ Եպարքոսին և թէ՛ Դատական և կրօնական գործերի նախարար Ձէվտէթ փաշան ապարանքներն երթալով, չնորհակալութիւն յայտնած է իւր հրաժարականի ընդունելուն համար։

— Խառն ժողովը յունիս 15/27ի նստին մէջ, Տիգրանակերտի վիճակին պատրիարքական փոխանորդ կարգած է Վանի պատրիարքական Փոխանորդ Գեր. Ալէքսիճեան Գրիգորիս եպիսկոպոսն. իսկ Վանի Պատր. Փոխանորդ կարգած է Թադէոս վարդապետն որ իւր ապիկարութեամբ ծանօթ է արդէն Վանի մէջ . . .

— Ձնքսուշ գաւառի Արտիշ գիւղէն Կ. Պոլիս գտնուած Հայերն մեծ բազմութեամբ Պատրիարքարան իջնելով, Խառն ժողովի յունիս 15/27ի նստին ներկայացուցեր են իրենց գիւղի մէջ գտնուող ազգակիցներուն անտանելի վիճակը հարստահարութիւններուն պատճառով և գործման խնդիրը են։ Ժողովը յայտներ է թէ կայսերական կառավարութեան դիմումը եղած է իրենց համար և յոյս տուեր է իրենց խնդրի կարգադրելուն։

Սրտիշ գիւղացիներուն հարստահարութիւններուն մասին գրած ենք արդէն նախորդ թուերով։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

Սալմաստ, 15/27 մայիս 88

Սալմաստցի գիւղացի տղամարդն գործուն բացուեց թէ չէ՝ թողնում է իւր ընտանիքը, իւր կալուածքները, գնում է պանդխտութեան Ծփղիս, կամ աւելի հեռու, Ռուսիոյ խորերը, իւր ընտանեաց ապրուստ ճարելու կամ իւր պարտք վճարելու համար. անցնում են տարիներ այդ ճոխ քաղաքներում մեր տղամարդի համար մինչպես մի օր կամ մի ամիս։ Նա հասկանալով այդ քաղաքակրթուած երկրի հարստութիւն և կեանքի անխոտոր վիճակին իւր հայրենեաց և իւր վիճակին հետ, մեծ զանազանութիւն է գտնում և փոքր մինչ ընտելանալով այդ երկրի սովորութեանց հետ, բոլորովին մոռանում է տունն և ընտանիք, տղին ու հայրենիք, սկսում է օրական աշխատել, ուտել, խմել և անհնայ վատնել և իւր այդ աշխատանքից բնաւ բաժին չհանել իւր սիրելի ընտանեաց։

Բայց արի տես որ մինչ նեղ օրեր են անցկացնում իւր հայրենեաց մէջ իւր ծերունի ծնողքներ կամ իւր 2–3 զաւակներ և կինը. կարծես նոքա էլ իւր մոռացկան առարկաներ չլինէին. նորանք յայտնի է, սիրելի ընթերցող, թէ մինչ նեղութեան մէջ են ընկնում. եթէ աշխատել չեն կարող, մինչ ունին չունին կամ վաճառում են և կամ գըրաւ են դնում մի փողատոր հարուստի մօտ. փող առնում են ուտում, ի հարկէ ժամանակով. ժամանակն լըրանում է, գալիս է գրաւատէրն և իւր փողն պահանջում է. եթէ այս վերջինը չունի որ վճարէ, տղաչում է, պատատում է որ սպասէ մի քանի օր կամ ամիս, մինչեւ մի թուղթ կամ մի պատասխան ստանայ իւր պանդխտէն։ Սակայն վաշխառուն՝ դիտէք հարիւր, չուտ չի պիջանում մինչեւ որ ծանր չնստեցնէ այդ թշուառ և խեղճ ընտանիքի վերայ. ահա այսպէս մի քանի տարիների մէջ փճանում են խեղճի ամն իրեղէնք և կալուածքն։

Մենք այս հինգ տարուան միջոց է որ բնակվում ենք այս գաւառի գիւղերէն միոյն մէջ. չատ գերդաստաններ և անձեր վերոյիշեալ դրութեան մէջ ինկած տեսել ենք. այս տեղ ծեր, տղամարդ, մանուկ և մինչեւ անգամ կիներն ալ ձգտում են դէպի Ռուսաստան ապրուստ հայթայթելու, չատ գիւղերում մոռացել են իրանց հայրենի արհեստները — կառավարութիւն, չիլչիւռ-

---

civile) բաժինը վեց գլուխ կը կազմէ. անձնական յատուկ ծախքը 11 միլիոն Ֆրանգ դրկէք (այս թիւ իրականէն չատ պակաս է), կայսերական պալատէն ոտիկ սուտած մի՝ 2 միլիոն Ֆրանգէն մի քիչ աւելի: Այդ երկու գումարների վրայ աւելցնելով կայսերական պալատների պահպանութեան ծախքերն, իշխանների և իշխանուհիների թոշակներն և ոտիկներն, հանդստեան վիճակին կոչուած կամ կարգընկէց եղած ուլեմանուհիներին և հարճերին, ինչպէս նաեւ պալատի հին սպասաւորներին թոշակներն և ոտիկներն, ծառայողների ահագին խմբին տրուած ոտիկներն, ատոնց ամենքին գումարը կըհասնի 173 միլիոն ղրուշի կամ դրէթէ 40 միլիոն Ֆրանգի, որ ինչպէս պիտի ցոյց տամ յետոյ, պալատին մէջ իրօք վատնուած գումարին կէսն անգամ չներկայացուներ։

Ներակոյի ժողովը որ ա՛լ նիստ չաներ, Երեսփոխանական ժողովը որ երեք տարի միայն նիստ ունենալէ յետոյ լուծուած է 1877ին, Պետական խորհուրդը որ ոչ մէկ բանի ծառայած չէ երբէք, Հաշուակալութեան հսկող բարձրագոյն Ատեանը որ ոչ մէկ հաշուի հսկելու իրաւունքը չունի, այս ամենքը 1880-81ի եւ մատցոյցին մէջ 2,530,000 Ֆրանգի մի ծախք կը ներկայացուներն։ Աւելորդ է ըսել թէ այդ գումարի վեցէն մէկը միայն կը վճարուի։

Մեծ Եպարքոսը իւր պաշտօնատան մարդերով մէկտեղ տարին 530,000 Ֆրանգ կը ստանայ եւմատցոյցին համեմատ։ Մինակ ինք Մեծ Եպարքոսը տարեկան դրէթէ 200,000 Ֆրանգ կը ստանայ Տերութենէն — որ Ֆրանսական Հանրապետութեան 4 նախարարներին չափ ասել է —, այս գումարէ դուրս են նաեւ այն «փոքրիկ շահեր» որ իւր եպարքոսական դիրքը կը բերէ իրեն։ Ինձ կը հաւատաեն թէ մի քանի տարի յառաջ ճարտարապետական մի մեծ ձեռնարկի արտօնութիւնը ձեռք բերելու համար՝ այն ժամանակի Եպարքոսին 50,000 օսմ. լիրաի մի փոքրիկ գումար տրուած է, որ ասել է մէկ միլիոն հարիւր քսան և հինգ հազար Ֆրանգ։ Եւ այդ Եպարքոսն ալ ամենեւին կաշառ չուտող և անշահախնդիր մէկը համարուած էր։

Շէյխիւլ Իսլամը, մահմէտական կրօնի գլխաւորը, և իւր մարդերը կը ստանան ամենքը միասին տարեկան 3,450,000 Ֆրանգ։

Ներքին գործերի նախարարութեան համար եւմատցոյցին մէջ կըր հաշուով նշանակուած է 20 միլիոն Ֆրանգ, որի մէջէն 31 վալիների (նահանգապետ) տըրուած գումարը կը կազմէ 1,400,000 Ֆր., որ միջին հաշուով իւրաքանչիւր վալիին 46,000 Ֆրանգ ասել է։ Այն աւելի կամ պակաս ապօրինաւոր չահեր որ իրենց կառավարած նահանգների մէջ ձեռք կը բերեն այդ վալիները, իրենց ստացած սովորական ամսաթոշակի կրկնապատիկը, եռապատիկը և երբեմն ալ մինչեւ տասնապատիկը կը լինի։ Եթէ կարենան ոչխարների մորթը քերթել ատանց գինքնք չափազանց պօռացուներլու, եթէ մի օտար հիւպատոս չկայ այնտեղ հակող իրենց արածների վրայ, և մանաւանդ եթէ խնամատանին իրենց յաջողակութեամբ դիպուածներին բաժնէկից գտնել արքունի պալատին մէջ, կարող են անպատիժ կերպով չարաշահել իրենց փոքրիկ աաւեւտուր։ Այժմեան Թագաւորի իշխանութեան ժամանակ տեսնուած է նաեւ մի փաշա որ կը բանտարկէր և մինչեւ անգամ, կասեն, սպաննել կուտար այն մարդերը որոնք չէին ուզեր անարգ գներով իրեն տալ իրենց հողերը։ Այս նկատմամբ աւելի մանրամասն տեղեկութիւններ համար կարելի է դիմել Հալէպի անգլիական հիւպատոսին(1)։ Աւելորդ է ասել թէ այդ փաշա այժմ բացառիկ մի չնորհ կը վայելէ։

(Շարունակելի)

(1) Առաջին տարու Արմենիայի մէջ ալ տեղեկութիւններ հրատարակուած են այդ փաշայի արարքներին նկատմամբ որ Հալէպի անգլիական հիւպատոսարանի Թարգման Պ. Նիկողայոս Տ. Մարդաբեանի և անոր ազգականների այնչափ վնասներ հասուցած և սպառնալիքներ ըրած էր, անոնց հողերը գրաւելու համար։

Խմբ.

թիւն, ճախարակի մանելը եւն. այս-պիսի նահապետական արհեստներ, որոնցմով սրանից 30–40 տարի առաջ իրանց հայրերը կամ պապերը ապրուստ էին հայթայթում։ Իրանք ծերունիները վկայում են այս թիւը ընթացքի ճշտասկզբութեանը, բայց ի՞նչ օգուտ քանի որ չեն կարող չինել այն ցանկապատը որով առաջին աւերով իրանք են եղել։ Խնդացի տզամարդիկը դըժդոհ են և անիծում են իրանց այս օրերը։

Այս օրերում մեր բնակած գիւղէն մի յախուռն բազմութիւն, 14 տարեկան տղայից մինչեւ 40 տարեկան տղամարդիկը, դարձեալ գնացին պանդխտութեան, աշնան գնացողներէն աւելի, այնպէս որ 130 տան մէջէն 10–20 տղամարդ չի մնացել դիւղս, մինչդեռ Ռուսաստանում կան հարիւրաւորներ։ Առտուած մի արտոյտ, եթէ գող և աւազակների կողմից մի չարիք հանդիպի — ոչխարի կամ նախրի աւարել —, ոչ օք չկայ որ վերադարձնի. այսպիսի յափշտակութիւնները յաճախ պատահում են այս գիւղում, եղերքի վրայ լինելուն համար. Թող տանք ծեր մարդիկ որոնցից բնաւ յոյս չկայ այսպիսի միջոցներում։

Անուս ժողովրդեան կամ հասարակութեան համար հարկաւոր է ամէն ժամանակ քարոզներ և խրատներ ասել, ցոյց տալ նորանց որ՝ ապրուստ ճարեն իրանց հայրենիքում, լինին տակաւապէս, սովրեցնել չաս պանդխտութեանից ծագած վնասները և ուրիշ այսպիսի չաս օգտակար բաներ (քանզի պանդխտութիւնից մեր քիչ տղամարդները չվճասան)։ բայց ո՞վ կայ հոգացող կամ ցուցակող աղքատութեան առաջնոց այդ կերպ սովորութեանց համար։

Ա. Մ.

ՎԱՆԻ ԼԻՃԸ

«Թարիգ» թիւրք լրագիրը կըզրէ թէ նախարարական խորհուրդը Սուլթանին մի տեղեկագիր տուած է որ եթէ Սուլթանի վաւերացմանն սպասանայ, Վանի լճին մէջ չոգենաւ բանեցնելու վճռաշնորհը պիտի արուի Կ. Պոլսեցի հայազգի անուանի մեքենագէտ Գամալեան էֆէնտիի և ընկերութեան։

ԹՈՒԼՉԱՅԻ

Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ հաստիքն ու ծախքը 1886 նոյ. 8ից մինչեւ 1888 փետր. 21

ՀԱՍՈՅԹ

	Ֆր. սնք.
Խաչհանին եկեղեցւոյ հին հաշուէն լինէ յանձնուածը	2 80
87 տարուան տոմսակներէն հաւաքուած տակը	928 —
87 յունվ. 1էն մինչև 88 փետր. 21 եկեղեցւոյ հասոյթը	726 40
Առանց տոմսակի Տավիտ օղլուի մօրմէն առնուած	10 —
Բէնզերթօռ Միսիս Նալարեթեանէն առանց տոմսի	20 —
Սուլինա Գասպար ապայէն առանց տոմսի	40 —
Միսիս Տավիտ օղլուէն	100
Միսիս Խաչհան Օհաննէսի հարսանիքէն խաչերթայ-ըութիւն	35
Մելիտոնեանի յանձնած տասակէս լինէ գարձուցածը	46 70
Խաչհանէն տնտկանի հաշուով առած տակս	130 —
	2038 90

	Ֆր. սնք.
87ին եկեղեցւոյ հասոյթէն Սիմոն ապայից առած	125 —
86 նոյ. 15ին տոմսակներէն Սիմոն ապայից առած	115 —
Միսիս Նալարեթեանէն Սիմոն ապայից առած	20 —
Խաչհանի հարսանիքէն Սիմոն ապայից առած	35 —
Սպասած տոմսերէն Քահվեճեանի յանձնածս	200 —
Եկեղեցւոյ հասոյթէն Անդրանիկ Մանուկեանի յանձնածս	95
87 ապրիլ 3էն մինչեւ Զատիկ եկեղեցւոյ ծախք	76 60
88 փետր. 21 եկեղեցւոյ ծախք	178 —
Ճանապարհութեան ծախք	169 —
Թէնեքէճի Իլիւլին տուած տակս	184 —
Եկեղեցիին ֆօթօկրաֆին համար	40 —
86 նոյ.էն մինչեւ 88 մարտ 1. ամսական 45 ֆրանքէն	720 —
	1957 60
Այս հաշուին համեմատ եկեղեցւոյ առնելիքը կը մնայ	81 30
	2038 90
և անունք լինէմէ 469 ֆրանգ առնելով, կը մնայ առնելիքս	469
	81 30
որ գեռ վճարած չեն	387 70

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴՊՏ. ԱՃԷՄԵԱՆ
Թուռլջա (Ռումանիա)

Թիւրք գործերի ամսականներից
չը վճարուիլը
եւ անոնց նահատ խռովարիւնը

Հինգշաբթի օրի Petit Marseillais *լրագրէն կը քաղենք հետեւեալը.*

«Կ. Պոլսէն յունիս 26ին գրուած մի թղթակցութիւն կը պատմէ թէ տաճկական 1299 (1883) թուականին ժողվուած գործերն, իրենց պայմանաժամ վճարած լինելով, չոգենաւ գրած էին իրենց հայրենիք վերադարձնելու համար։ Պատերազմական նախարարը հրատարակել տուած էր թիւրք լրագիրների մէջ թէ այդ գործերը վճարուած և այնպէս արձակուած են, բայց այդ յայտարարութիւն ճիշդ չէր Այն րոպէին որ խարխիրը վեր կըքաշէին և չոգենաւը պիտի մեկնէր, գործերը բռնեցին ապայներն կապկպեցին և պահանջեցին որ իրենց ամսամոշակները վճարուին։

Խնդրն վաչատակա (մերկ լիմա) Արիֆ փաշան երկու ապայներով մեկտեղ հասան չոգենաւ, համոզելու համար գործերն որ համերաւթիւն ունենան։ Խռովայոյզներն չուզեցին մտիկ անել և զանոնք ալ չոգենաւէն վար նետեցին։ Բարերաղդաբար, մեկնող չոգենաւին քով վորքիկ նաւակներ (գայըզ) կը գտնուէին որոնց մէջ մտան Արիֆ փաշա և իր ստորադրեալները։

Նորէն լուր ղրկեցին պատերազմական նախարարին որ անմիջապէս 1000 օսմ. ոսկի ղրկեց խռովայոյզներին վճարելու համար։ Այդ ժամանակ ըմպայներն ալ նաւակ ելան և նաւն սկսաւ ճամբայ ելնել։ Բայց երբ մտան Սեւ ծով և մօտեցան էրէյլիին, գործերն վերստին սկսան խռովութիւններ հանել. այդ տպատամբները նորէն բանտարկեցին իրենց հրամայող ապայներն և իմաց տուին էրէյլիի գայմագամին (գաւառապետ) որ չնորհ անէ իր տեղեակ հեռագրելու Կ. Պոլիս և թախանձելու որ պէտք եղած տակնները ղրկեն ամրողջապէս վճարուելու համար իրենց ամսամոշակները։

Նիւսրէթ փաշա որ էրզրումի գործքերի հրամանատարն է, իմաց տուած է Կ. Պոլիս Սուլթանին պալատը թէ շատ մեծ դժուարութեամբ կը յաջողի զսպել իր գործքը որովհետեւ ամրողջ մէկ տարուն մէջ մէկ ամսական միայն տասցած են. չատեր դադարի լինելով կը վախչին։ Արտասահմանի մէջ լուր է տարածուած թէ Մեծ Եպարքոսին պաշտօնանկութիւնը մօտալուտ է և անոր յաջորդելու համար իբր ընտրելիները կը ներկայացուին Սայիտ փաշան, Մահմուտ Ճէլալէտտինի և Ճէմիլ փաշան անունները. այս վերջինը մեծ ազդեցութիւն ունի գործքերին վրայ և Սուլթան Ապտիւլ-Համիտի ամենէն անձնուէր ծառայողներէ մին է։

Ա Զ Դ

Թիֆլիս Արմենիայի Դ տարէշրջանի առաջին թիւը պիտի հրատարակուի սեպտ. 21/3 հոկտեմբերին և Խմբագիր–Տնօրէնին Մարտիրոսին բացակայ լինելիք օգոստոս և սեպտեմբեր ամիսներուն մէջ ալ իւր հասցեով գործակատար անկորուստ, բայց տեղի վարձքելի է որ Խմբագիր–Տնօրէնին դեռ այստեղ եղած ժամանակ ստացուին Արմենիայի բաժնորդագրութեան վերանորոգման նամակները որպէս զի Մարսէյլէն մեկնած ժամանակ կարելի եղածին չափ իմացած լինի թէ ո՛րչափ բաժնորդ կունենայ առաջիկայ տարին։

Այս առթով կրկնելով թէ բաժնորդ ազնիւներն կանխիկ վճարելի են, կը խնդրենք նաեւ մեր այն բարեկամներէ որոնք դեռ ճեացորդ հաշիւ ունին ներկայ տարեշրջանէ, բարեհաճին ժամ յառաջ վճարել, որով դիւրութիւն տուած կը լինին մեր գործի։

ՏԵՂԱԿԱՆ

Յուլիս 14ի ֆրանսական Ազգային Տօնին համար որ Պաստիլի գրաւման և 89ի Մեծ Յեղափոխութեան սկզբնաւորութեան տարեդարձը կը ներկայացնէ, այժմէն սկսած են պատրաստութիւններ տեսնել ամեն կնկերութիւններ, մասնաժողովներ և խմբեր, իրենց շրջանակների մէջ։

— Վաղը, ազգային մի միմիկ պիտի գումարեն այստեղ Ֆրանսացիները, բողոքելու համար օտար ձեռագործների տարածման դէմ Ֆրանսայի մէջ։ Զօրավար Պուլանժէ ալ խոստացած է գալ ներկայ գտնուիլ այդ միմիկին։

— Էրզրումի անուանի Հայերէն Մեծ. Նշկեան եղբայրներն որոց երիցագոյնն Մեծ. Պրն. Յակոբ Նշկեան ամուսնացած է Կ. Պոլիս, ընտանիքով հանդերձ եկան Մարսէյլ 4 օր յառաջ և յառաջիկայ շաբաթ առկէ կէսգիշեր Ամերիկայի Միացեալ–Նահանգներն այնտեղ հաստատուելու համար իրենց բնակութիւն։

—Այս տարի ուրիշ տարիների հետ համեմատութեամբ, դեռ այնչափ տաք չուներ Մարսէյլի մէջ։ Հարիւրմնտեայ ջերմաչափը բաց օդի մէջ երեկ առաւօտ ժամ 7ին ցոյց կուտար 18 ½ աստիճան, կէսօրին 20, կէսօրէն յետոյ ժամ 2ին 21 ½ և ժամ 6ին 21 աստիճան (իսկ Փարիզի մէջ երեկ առաւօտ 15 աստիճան էր ջերմութիւնը)։

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԼՈՒՐԵՐ

Հռոմի Tribuna լրագրի դրածին նայելով, անգլօ–իտալական առեւտրական դաշնագրի համար բանակցութիւններն յաջող վախճան չունենալով, դադրած են վերջնականապէս Միեւնոյն լրագիրը կըհաստատէ այն լուր թէ Իտալիոյ նախարարապետ Գ. Քրիսպի Ալմանիա պիտի երթայ և այս առթով կաւելցունէ թէ Ֆրէարիխսրուհեի տեսակցութենէն ի վեր վերին աստիճանի կարեւոր մի դէպք պատահած է որ բարեփոխած է մեծ պետութիւններէ մի քանիին մէջ եղած յարաբերութիւնները։ Ահա այդ եղած է գլխաւոր պատճառ Գ. Քրիսպիի ճանապարհորդութեան սրի պատճառական հետեւանքներն ալ յետոյ կարելի պիտի լինի որոշել։

— Վիէննայէն եկած մի հեռագրի նայելով, զօրավար Վալտերսէ՝ Վիլհելմ Բ կայսրի գահակալութիւնն ծանուցանելու պաշտօնն միայն չէ ունեցած Վիէննայի մէջ, այլ բանակցած է Ֆրանց Եողէֆ կայսրի հետ այն մի քանի խնդիրների մասին ալ որոց վրայ Վիլհելմ կայսրը պիտի խօսակցի Զարլին հետ մօտակայ տեսակցութեանը մէջ։ Զօրավար Վալտերսէ որ Աւստրիական սպայակոյտին մատուցած ծառայութիւններուն պատճառով Ֆրանց Եողէֆ կայսրին սիրելի մի անձ է, շատ գոհ վերադարձած է Վիէննայէն Պէռլին. կասեն թէ պուլկարական խնդրի կարգադրութեանն համար իր արած առաջարկները ընդունուած են Աւստրիայէն և եթէ Գեռեր-

բուրգի մէջ ալ համաձայնութիւն գոյանայ, գէթ. ամսին մէջ երեք կայսրներն միասին մի տեսակցութիւն պիտի ունենան, Ֆրանց Եոզէֆ կայսրի գահակալութեան 40րդ տարեդարձին առթով։

—Պետերբուրգէն «Սթանտարտ»ի ուղուած մի հեռագրին նայելով, խօսք կայ թէ Վիլհելմ կայսրի քոյրերէ մին պիտի տրուի Զարեւիչին (Զարի որդին)։ Զօրավար ոչ Բար կանխաւ զգացունել տուած է այդ մասդրութիւն Զարին որ նպաստաւոր երեւցած է մի այդպիսի առաջարկի։

— Պելկրատէն կը հեռագրեն թէ Սերպիոյ Միլան թագաւորը իւր կը նամոզութեան խնդիր ներկայացուցած է սերպական Սինօդին։ Հեռագիրը կը յայտէ նաեւ թէ զօրավար Բրօթիչ ղրկուած է Վիեննայէն, այնտեղէն Պելկրատ բերելու համար Սերպիոյ գահաժառանգ երիտասարդ իշխանը։

«Նայէ Ֆրայէ Բրէսէ» լրագիրն ալ կը գրէ թէ Նամոլի թագուհին հեռեւեալ հեռագիրը ուղուած է Սերպիոյ Մետրապօլիտին. «Թագաւորը ինձ գրած է թէ գաւառական առեւտրին դիմած և բաժանումի մէջ գրած է։ Ո՛չ եկեղեցական կանոններն, ո՛չ ալ քաղաքային օրինագիրքը կընդունի այդ տեսակ բաժանում, առանց բանակատարուելիք պատճառների։ Մեր մէջ այդպիսի պատճառները գոյութիւն չունին և երբէք չպիտի հաւանիմ բաժանման։ Հաւատքս գրած եմ աստուածային գաւառականին վրայ։»

— Լսուր կայ թէ Ռուս կառավարութիւնը չպիտի պահանջէ Պուկարիոյ Ֆերտինանտ իշխանի գահընկեցութիւնը, եթէ սա իրեն պատերազմական նախարար ընդունի մի Ռուս զօրավար։

— Փարիզի Le Voltaire լրագրին Թիւրքիա մուտքն արդիւնքը է։

— Պելգիոյն յուլիս 4ին հեռագրած են հեռեւեալը. «Իրրեւ արուսած Մուսական կիսազունեն թէ յուլիս 13ին Վիլհելմ կայսրը ճանրայ պիտի եկնէ Պետերբուրգ երիտասարդ համար։ Կայսրը Փինլէնդ պիտի նաւի «Հօհէնձօլերն» շոգենաւը որ կը պատրաստուի և որի հրամանատարութիւնն պիտի անէ Կայսրին եղբայրը Հէնրի իշխանն։ Պետերբուրգի մէջ մեծ պատրաստութիւններ կը տեսնեն Վիլհելմ կայսրը ընդունելու համար. բայց երկու ազգութիւններն ալ սուգի մէջ լինելնուն պատճառով, մի մեծ զօրահանդէսէ զատ հանդիսին ուրիշ ոճնախարութիւն չպիտի լինի։ Պահմայք իշխանն ինք չպիտի երթայ Կայսրին հետ, այլ իւր տեղ պիտի երթայ իւր որդի Հէրպերթ կոմսը։ Ամեն մարդ համոզուած է որ պուլկարական խնդիրը երկու վեհապետներն մէջ խօսակցութեան նիւթ պիտի լինի, բայց այստեղ Պելգիոյն մէջ այնպէս կը ձեւացունեն որ բարձրաձայն կուզեն ապահովցունել թէ Պետերբուրգի մէջ համաձայնութիւն գոյանայ ալ, պուլկարական խնդիրը չպիտի կարգադրուի առանց Աւստրիոյ մասնակցութեան։

— Իտալիոյ նախարարապետ Պ. Քրիսպիի ընտանիքը գնացած է Բարլեսպատ ուր պիտի երթայ մի քանի օր յետոյ ինք Պ. Քրիսպի եւս։ Պ. Քրիսպի կը սպասէ մարքիզ Բալիանոյ պաշտօնով։ Այդ պաշտօնին բաւական մեծ կարեւորութիւն տրուած է։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

CONSTANTIN P. CHÉHIANTZ
Négociant-commissionnaire
à Milan (Italie)

Հայ վաճառականները որոնք կը փափագին ուղղակի յարաբերութեան մտնել Պ. Կոստանդին Շէհեանցի պատուաւոր Հայ վաճառատան հետ, յանձնարարութեամբ ամեն տեսակ ապրանքները գնելու կամ ծախելու համար, պէտք է գիմեն ուղղակի հետեւեալ հասցէին.

Monsieur Constantin P. Chéhiantz
No 18, Via Lauro, 18
Milan(Italie)

Ա Զ Դ

Մեծ. Պրն. Լեւոն Ց. Մինասեան, Մխիթարեան վանքերի դուժ ակատարն ի Բաւճուգ, որ այդ բազմաղդիւն վանքերէ հրատարակուած դիրքերն և պատկերները կը ծախէ Ռուսաստանի մէջ դիւրամատոյցի գնելով, փափաքելով օգտակար լինել նաև Արմենիային, յանձն առած է ծախել Արմենիան թերթի առ թերթի Ռուսաստանի մէջ, հատը 20 ռանթիմ մինչեւ յառաջիկայ յուլիսի վերջ. իսկ այնուհետեւ հատը 10 ռանթիմ, ինչպէս արդէն յայտարարուած է Արմենիայի մէջ։ Այնուհետ ծախու կը դանուին նաև մեր ազգանէ հրատարակուած տետրակներն։

Պրն. Լեւոն Մինասեան յանձն առած է նաև բաժնորդներ գրել Արմենիայի համար։

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

Հեռեւեալ գիրքերն կարելի է առնուլ Արմենիայի խմբագրատունէն, իրենց առջեւ նշանակուած գիներով և փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

Աւժէքը կանխիկ չվճարուած՝ գիրք չղրկուիր։

ՉՈԱՏԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆԻ

Ա. ՀԱՅ ԳԻՒՂԱՑՈՒՀԻ ՄԸ (Եւրոպայի մէջ բնակած մի Հայի Հայաստանի վրայ տպած խորհրդածութիւններով կը պատմէ երեւանցի մի հայ ազգկան հատուածամասութիւնը մանկտական կրօնը չընդունելու և իր հայ նշանաձի հաւատարիմ մնալու համար), 30 ռանթիմ.

Բ. ՀԱՅ ԳԻՒՂԱՑԻ (Հայ գիւղացիների բան վիճակը որ չատերին անծանօթ մնացած է, ուսումնասիրելու պէտքը կը ներկայացունէ), 20 ռանթիմ.

Գ. ՍԱՂՄՈՍ ԻՄՐԱՅԼԻ (Հայաստանի ազատութեան ցանկացող մի Հայի մտքի անքներն և մտածումներն են Սպասուի սոճով գրուած), 40 ռանթ.

Իրիմեան Հայրիկ—ՎԱՆԴՈՑԻ (Ամեն. Իրիմեան Սրբազանի գրած պատմական և ազատասիրական տետրակը 1876ի վանի հրդեհին նկատմամբ)։ 70 ռանդիմ.

Գամառ Քաթիպա — ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ. (Ազգային առաջնակարգ բանաստեղծ Ռ. Պատկանեանցի տպագրուած և հրահանգիչ բանաստեղծութիւնները կը պարունակէ. ակիզբն դրուած է հեղինակին պատկերը)։ 2 ֆրանգ։

Գ. Աբովեանց—ՀԱՅՈՑ ԱԶԳԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. (Ամեն Հայի համար անհրաժեշտ պարտք է իմանալ իւր ազգի պատմութիւնը, գիտնալ թէ ինչպէս սկսեր է իւր ազգ, ո՛րտեղ ունեցեր է իւր հայրենիք, ինչպէս եկեր հասեր է մեր օրերը, ո՛րոնք եղած են իւր երջանկութեան և իւր թշուառութեան պատճառները են.։ Գէորգ Աբովեանց որ Տփղիսի Ներսիսեան վարժարանին մէջ Հայոց պատմութեան ուսուցիչ էր, գրած էր այս «Համառօտութիւն Հայոց ազգի պատմութեան»ը որ մինչև այժմ երբեմն տպագրութեան արժանացած է։) 2 ֆր.

ՍԻՄՈՒԱՆ կամ Համառօտասում Հայկական Կիլիկիոյ. Հ. Դևոնդ Ալիշանի այս հրաշակերտ՝ ոչ միայն ամենամեծ պատիւ կը բերէ բազմահմուտ հեղինակին Հայրենասիրական ղգացմանն, այլ և մեծ պարծանք է ամբողջ Հայութեան համար որի փառաւոր յիշատակներն աւերակների մէջէն և գաւառը վիշտների տակէն դուրս բերել յաջողած է։ Կիլիկիան, մեր վերջին թագաւորութեան օրրանն ու գերեզմանը, ներկայացուած է այս գրքի մէջ իւր ամեն մանրամասնութիւններով։ Ընթերցողը կը գտնէ այնտեղ պատմական, աշխարհագրական, տեղագրական, բնաքննական են. են. հին ու նոր տեղեկութիւններ, Հայ թագաւորների հրովարտակները, իշխանավարական, գաւառապետական են. հետաքրքրաշարժ ծանօթութիւնները ոգնք Ալիշանի պէս բազմահմուտ մի անձի ուսումնասիրութեան և խստագրութիւնների արդիւնքն եղած են։ Հայ դպրութեան մէջ երեւցած այդ հրաշակերտ՝ որ Հայբենասէրը վարդապետին Հ. Դևոնդ Ալիշանի ճարտար և անխոնջ ձեռքով կանգնած է ցոյց տալու համար մեր Կիլիկեան թագաւորութեան փառքն ու պարծանքը, արժան է որ ազգասէր ամեն մէկ Հայի գրադարանը զի ամեն Հայ իրաւունք ունի պարծենալու անով։

Գրքին սկիզբը կայ Վեր. հեղինակին պատկերը։ Ամբողջ գործը՝ բայց մի ընդարձակ ներածութենէ, կը պարունակէ 592 երկիւղեան երեսներ։ Տպագրուած է ընտիր տեսակ թղթի վրայ և ունի 235 գեղեցկագիծ պատկերներ որոնք կը ներկայացունեն կիլիկիոյ գեղեցկագոյն տեսարանները։ Ունի նաեւ կիլիկիոյ աշխարհագրական ներքագիծ մէկ քարտէզը որ առանձին եւս կը ծախուի Սրմենիայի խմբագրատունը, ինչպէս նշանակուած է յետագրեալ ծանուցումներուն մէջ։

ՍԻՄՈՒԱՆԻ առաջնակարգ տեսակը (լաւագոյն թղթի վրայ տպագրուած և 15ի չափ գունաւոր պատկերներով և պարզեւագրերով) 55 ֆրանգ։

Նոյնը Բ կարգի (առանց գունաւոր պատկերների) 40 ֆր.

Նոյնին ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆԸ (Ա. յս վերջին տեսակ որ 1885 թ. «Բազմավէպ»ի իւր վերջին եռամսեայ պրակին հրատարակուած է, աշխարհագրական լեզուով քարտուցներ կը ներկայացունէ ՍԻՄՈՒԱՆԷՆ որ գրուած է գրաբար լեզուով—թէև ոչ խրթին և անհասկանալի ոճով — և ծանօթութիւններ կուտայ Սիսուանի պարսնակութիւններուն վրայ այնպէս որ զայն չունեցողին ցանկութիւնը կը գրգռէ ունենալու համար և ունեցողին ալ մի լաւ առաջնորդ կը լինի այդ ընդարձակ աշխատութեան մէջ դիւրաւ աչքով շրջելու և հետազօտելու համար։ 3 ֆր. 50 ռնթ.

Գամառ Քաթիպա — ԱԶԱՏ ԵՐԳԵՐ. (Գամառ Քաթիպայի «Բանաստեղծութիւններ»էն Ազատ Երգերի մասը առանձին տետրակով տպագրուած), 20 ռանթիմ։

ՋԱՅՆԱԳՐԱԼ ԵՐԳԱՑՈՂՈՒԹԻՒՆՔ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ. Բ. տպագրութիւն, (սրպագրուած ի Ս. Էջմիածին) 10 ֆր.

ԲԱՖՖԻ—ԿԱՅԾԵՐ. Ա և Բ հատորներ. Ազգային վիպագիրը Պրն. Բաֆֆիի գործերին մէջ առաջին տեղը կը գրաւեն ԿԱՅԾԵՐԸ։ Ա յս գիրք կը ծանօթացունէ ընթերցողը տաճկական և պարսկական Հայաստանի գիւղական տեղերին հետ, հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կուտայ քուրդերի պատճառն ցեղերի և հայերի գրութեան, վարքի և բարքի մասին։ Նա ցոյց կը տայ այն ծրագիրը որին պէտք է հետեւին Հայաստանի մէջ գործել ուզողները։ Մի խօսքով, թէ՛ իրր ապագային ընտիր վիպասանութիւն և թէ՛ իրր հայրենասիրական գործ անհրաժեշտ է որ գտնուի այս գիրք ամեն հայրենասէր Հայի տան։

Գինն Ա հատորին 7 ֆր., Բ հատորին 8 ֆր. և 50 ռանթիմ։ Երկու հատորներն միասին գնորին 15 ֆր.։

ՏՆՕՐԻՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ
Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅԼ
Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, M. SCHICKLER rue Vacon 50.